

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ձր.

Վեցամսեայ . . . 7 Ձր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 »

4 ԱՆԵԻԿ

Մանուցման փոքր
20 ամիսիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк

ВАРНА

Գրութեանը եւ լեւ
տրութիւնը

ԿՈՎԿԱՍԱՅՈՒԹԻՒՆԸ

Բ.

Սոյն յօդուածի առաջին մասով
եղրակացուցինք թէ ռուս կառա-
վարութիւնը Կովկասի մէջ իր իս-
լամ հպատակներուն ապստամբա-
կան և բաժանական (սեբառա-
թիսթ) ոգին ալիւս ըմբռնած,
հարկադրուած է անոնց դէմ խիստ
հսկողութիւն և զսպողական մի-
ջոցներ ի գործ դնել: Պագուի
և Շուշիի գաւառին նորագոյն
դէպքերու մանրամասնութիւն-
ները ցոյց կուտան թէ, արդէն
թիւրքանութիւնը սկսած են գոռալ
խլամ խուժանին դէմ, բայց դըր-
սէն գրգռուած ըմբոստ բնակչու-
թեան մը զսպումին համար գոր-
ծածուած այդ ծայրայեղ միջո-
ցը բացառիկ պարագայի համար
է միայն: Այն շարունակական չը
կրնար ըլլալ: Խաղաղութիւնը և
անդորրութիւնը վերահաստատե-
լու համար՝ որուն մէջ կը կայա-
նայ պետութեան շահը, աշխուրջ
հսկողութիւն և խաղաղ միջոց-
ներ ձեռք առնել հարկաւոր են:
ասոնք ալ ռուս կառավարութիւ-
նը արեւելի հայ տարրի միջոցա-
կրնայ ի գործ դնել ինչպէս անց-
եալին մէջ: Բայց այս անգամ
կառավարութիւնը այդ դերը
կրկին Հայերուն վստահանալու
համար պիտի մտածէ անշուշտ,
մինչեւ որ ապահով ըլլայ թէ հա-
յերը ռուս կայսրութեան ամ-
բողջութիւնը վտանգելու կամ
անկէ մաս մը անջատելու նպա-
տակ չունին: Ինչ որ Կովկասի իս-
լամներուն մէջ ակներեւ կը տես-
նուի: ոչ ալ անխիղճական ու
ծայրայեղ մտքերով ոգեւորուած
խռովայոյցներ են:

Ռուս կառավարութեան և ռուս
ազատական ու պահպանողական
դասակարգերու մտքերուն մէջ
մեզ նկատմամբ ծնած այս կաս-
կածները կարենալ փարատելու
համար Կովկասահայք լուրջ և
շատ լուրջ վարմունք մը պէտք
է ունենան: Մեր յեղափոխու-
թականութիւնները Կովկասի հա-
մար իրենց նպատակը իրակա-

նանալու ճամբուն մէջ պէտք է
նկատեն ալիւս, քանի որ հոն
կառավարութեան հետ մեր ու-
նեցած եկեղեցական, կրթական
և կալուածական խնդիրները ի
նպատակ մեզ կարգադրուեցան,
պայմանաւ որ «հայ ժողովուրդը
արդարացնէ Զարին ցոյց
տուած վստահութիւնը»: Յա-
նուն հայ ժողովուրդին եւ յա-
նուն հայ կազմակերպութեան
մը մենք պէտք չէ որ ալիւս
Կովկասի մէջ հակակառավարական
շարժումներու մղուինք, կամ
հայ ընկերակարական ու հայ
բանուորական անունին տակ Զա-
րին ու տիրող կառավարութեան
դէմ ապստամբական ցոյցերու
կազմակերպիչը ըլլանք: Կովկա-
սի մէջ «հայ սօսիալիսթ կուսակ-
ցութիւններ» ունենալու անո-
ւանական փառքէն թող զրկուի
հայը ի սէր բուն Հայրենիքի
դասին: Իսկ հայ գործաւորը կըր-
կին կրնայ իր հետ աշխատող
օտար գործաւորներու հետ
պաշտպանելի վարձքի և աշխա-
տանքի պահանջները առանց
ծայրայեղութեանց դիմելու և
առանց բուն թելադրիչները
ըլլալու: Մեծ նպատակին յաջո-
ղութեան սիրոյն պէտք է նիւ-
թական փոքր հաշիւները ետ
մնան: Մինչեւ որ մեզ սեփական
հայրենիք մը ապահովենք, հոգ-
չէ, սօսիալիսթական շարժումին
մէջ քիչ մը ետ մնացած ըլլանք:

Այսօր ռուս կառավարութիւնը
դէպի հայերը իր քաղաքակա-
նութիւնը փոխած կամ փոխելու
տրամադրութեան մէջ է: Եթէ
մենք իր վստահութիւնը արդա-
րացնենք: Այդ նպատակաւ
տրամադրութենէն օգտուելու
համար մեր յեղափոխ. կուսակցու-
թիւնները հանդարտ ու խաղաղ
դերք մը պէտք է բռնեն Ռու-
սիոյ ներքին գործերու մասին,
թողելով որ Կովկասի հայ ազ-
գաբնակութիւնը կրկին ապահով
զարգացումի ճամբուն մէջ մըտ-
նէ: Երկիրը երբ խաղաղի, էն
աւելի օգտուողը հայ տարրը
կըլլայ իր ընդունակութիւննե-
րուն շնորհիւ: Խաղաղութեան

վրդովման պատճառ ըլլալ հայ
տարրին զարգացումին ուղղակի
արգելք ըլլալ կը նշանակէ:
Ուստի պէտք է որ հայերը Կով-
կասի խաղաղացումին ուժ տան.
այս նպատակաւ ռուս կառավա-
րութեան աշակցին իսլամական
շարժումը զսպելու համար:

Կովկասը երբ խաղաղի և
հայ ազգաբնակչութիւնը կրկին
զարգացման ճամբուն մէջ մըտ-
նէ, թրքահայոց դատին պաշտ-
պանութիւնը կրկին ապահովուած
պիտի լինի և Ռուսիոյ ա-
շակցութիւնը հաւանաբար ա-
պահովուած, ինչպէս որ էր
Ալէքսանտր Բ. Զարի ատեն:
Այն ատեն հայերս ռուս կա-
ռավարութենէն դժգոհելու լուրջ
պատճառներ չունէինք: այսօր
ալ նոյն քաղաքականութիւնն է
որ նիքոլա Զարը սկսած է որ-
դեգրել հայերու համար: Դիտ-
նանք այս բարեփոխալ քաղա-
քականութենէն օգտուել, եթէ
չենք ուզեր որ մեր անհեռատես
և յախուռն շարժումներով պատ-
ճառ ըլլանք Կովկասի հայ ազ-
գաբնակչութեան փճացման և
թրքահայաստանի դատին տկա-
րացման:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բօրթամուտի մէջ ռուս և ճա-
բոն պատուիրակներու միջեւ
հաշտութեան համար հետեւեալ
պայմանները կայացած են վեր-
ջին համաձայնութեամբ:

Յօդուած Ա.— Այս յօդուածը կը
տրամադրէ հաշտութեան եւ բարե-
կամութեան վերահաստատումը Ռու-
սիոյ ու Ճաբոնի կայսրերուն: Պե-
տութեանց և հպատակներուն միջեւ:
Յօդ. Բ.— Ռուսիա կը ճանչնայ
Քորէայի մէջ Ճաբոնի գերակշիռ
շահերը՝ քաղաքական զինուորական
եւ տնտեսական տեսակէտներով:
Ռուսիա պիտի չհակառակի վարչա-
կան, պաշտպանութեան եւ քրոնթ-
րոյն այն միջոցներուն՝ զորս ճա-

բոն անհրաժեշտ պիտի դատէ Քո-
րէայի մէջ՝ Քորէայի կառավարութեան
հետ համախորհուրդ: Քորէայի մէջ
ռուսական հպատակները ու ձեռ-
նարկութիւնները միւս երկիրներու
հպատակներուն եւ ձեռնարկութիւն-
ներուն վայելած տրամադրութիւն-
ները պիտի վայելեն:

Յօդ. Գ.— Այս յօդուածը կը վե-
րաբերի Մանչուրիոյ պարպուելուն՝
ռուսական եւ ճաբոնական զինուոր-
ներուն կողմէ: Երկու իրկիրները
պարպուելու այդ ինչոյն համար,
բացարձակապէս իրարու յար եւ նը-
ման կացութեան մէջ կը գտնուին:
Անհատներու եւ կենդանիներու կող-
մէ ձեռք բերուած իրաւունքները
անվթար կը մնան:

Յօդ. Դ.— Բորթ-Արթուրի, Տալ-
նիի եւ յարակից երկիրներու եւ
ջուրերու վրայ վարձակալութեամբ
Ռուսիոյ ունեցած իրաւունքները
ամբողջութեամբ Ճաբոնի կանցնին:
Ռուսական հպատակներուն ստաց-
ուած քնները եւ իրաւունքները պա-
պանուած ու յարգուած են:

Յօդ. Ե.— Ռուսիա եւ Ճաբոն փո-
խադարձաբար յանձն կանեն բնա-
ւորելու համար՝ այն ընդհանուր եւ հա-
ւասար միջոցներուն դէմ զորս Զին
կրնայ ձեռք առնել Մանչուրիոյ
մէջ վաճառականութեան եւ ճար-
տարարութեան զարգացման համար:

Յօդ. Զ.— Մանչուրիական երկա-
թուղին Ռուսիոյ եւ Ճաբոնի միջեւ
բաժնուած է Քուանկ-Չէնկ-Չէի մէջ:
Այդ երկու մասերը միայն առեւ-
տըրական ու ճարտարարութեան
նպատակներու համար պիտի գոր-
ծառնին: Ռուսիա իրեն մնացած
մասին համար կը պահէ բոլոր այն
իրաւունքները զորս Զինու հետ
կնքած պայմանագրութեամբ ձեռք
բերած է՝ այդ երկաթուղին շինե-
լու համար: Ճաբոն կըստանայ իր
ձեռք անցուցած գիծին հանքերը,
սակայն անհատներու անհատական
ձեռնարկութեանց իրաւունքները
պահպանուած են: Երկու կողմերն
ալ ազատ են ուղաձնին ընելու
իրենց ձեռք անցուցած տեղերուն
վրայ:

Յօդ. Է.— Ռուսիա եւ Ճաբոն
յանձն կանեն Քուանկ-Չէնկ-Չէի
մէջ միացնել իրենց ունեցած եր-
կաթուղիին երկու մասերը:

Յօդ. Ը.— Մանչուրիոյ երկաթու-
ղին երկու մասերը պիտի շահա-
գործուին իրարու միջեւ առեւտը-
րական փոխադրութիւնները ապա-
հովելով անխափան:

Յօդ. Թ.— Ռուսիա Ճաբոնի կը
թողու Սախալինի հարաւային մասը

մինչև 50 րդ. աստիճանը՝ անոր
յարակից կղզիներով ։ Լա Բեբուզի
ու թարթարի նեղուցներուն մէջ
ազատ նաւարկութեան իրաւունքը
ապահովուած է ։

Յօդ. Ժ. — Այս յօդուածը կը ճշ-
դէ Սախալին կղզիին մէջ առաջ-
կան հպատակներուն կացութիւնը ։
Ռուսական զաղթականները իրաւունք
ունին հոն մնալու, առանց իրենց
ուղղութիւնը փոխելու եւ պահելով
իրենց բոլոր իրաւունքները ։ Ասոր
հակառակ ձառնի կառավարութիւ-
նը կրնայ հարկադրել ռուս տարա-
գործները հետանալ իրեն տրուած
տեղերէն ։

Յօդ. ԺԱ. — Ռուսիա յանձն կառնէ
համաձայնութիւն մը գոյացնել ձա-
րոնի հետ՝ ճարտնական հպատակնե-
րու ձկնորսութեան իրաւունքին
համար՝ առաջին աստիճանէն
սկսած եւ ձառնի, Օխոցքի եւ Պէն-
րինկայի ծովերուն մէջ ։

Յօդ. ԺԲ. — Երկու պայմանագիր
բարձր կողմերը յանձն կառնեն
վերանորոգել պատերազմէն առաջ
գոյութիւն ունեցող առեւտրական
դաշնագրութիւնը՝ մանրամասնու-
թեանցը մէջ թեթեւ փոփոխութիւն-
ներով եւ ամենէն նպատակաւորաւ
ազգին տրամադրութիւններով ։

Յօդ. ԺԳ. — Ռուսիա ու ձառնի
փոխադարձաբար յանձն կառնեն վե-
րադարձնել իրենց պատերազմական
գերիները, վճարելով անոնց ապ-
րուստին իրական ծախքերը՝ վաւե-
րական գրութիւններով հաստատ-
ուած ։

Յօդ. ԺԴ. — Դաշնագրութիւնը եր-
կու լեզուէ պիտի խմբագրուի՝
անգլիերէն ու ֆրանսերէն՝ առա-
ջինը ձառնիներուն եւ երկրորդը
Ռուսերուն համար ։ Երբ մեկնու-
թեանց մասին դժուարութիւն ծագի,
ֆրանսերէն բնագիրը նկատողու-
թեան պիտի աւելնի ։

Յօդ. ԺԵ. — Դաշնագրութեան վա-
ւերացումը պէտք է ստորագրուած
ըլլայ երկու Պետութեանց վեհա-
պետներուն կողմէ՝ 50 օրուայ
պայմաժամի մէջ՝ ստորագրուելէն սկը
սկսելով ։ Ֆրանսայի ու Ամերիկայի
դեսպանները միջնորդ պիտի ըլլան
ձառնի եւ Ռուսիոյ կառավարու-
թեանց միջեւ վաւերացումը հետա-
գործ ծանուցանելու համար ։

Յաւելումական Յօդուածներ

Յօդ. Ա. — Երկու բանակներուն
կողմէ Մանչուրիոյ պարպուիլը
պէտք է կատարուի 18 ամիսէն՝ ա-
ռաջին գծին զինուորներէն սկսելով ։
Այդ պայմանաժամը անցնելէն ետքը,
երկու կողմերը, իբրեւ երկաթուղիի
պահպան, իւրաքանչիւր քիլոմէթ-
րի համար տասնհինգ զինուոր
միայն պիտի կրնան թողուլ ։
Պարպուելու մանրամասնութիւնները
երկու հրամանատարներուն կողմէ
պիտի սահմանուին ։

Յօդ. Բ. — Սախալինի մէջ Ռուսիոյ
եւ ձառնի ստացուածքներուն սահ-
մանագիծը վերջնականապէս տեղ-
ւոյն վրայ պիտի որոշուի՝ մաս-
նաւոր յանձնաժողովի մը կողմէ ։

ՖԻԼԻՊԵՑԷՆ—ՊՈԻՐԿԱԶ

ԱՆՏՈՐԴԻ ՆՕԹԵՐ

Օգտուելով «Իրաւունք»ի բարեա-
ցակամութենէն, օգտուելով միեւնոյն
ատեն արձակուրդի պարապոյ ժամա-

րէս փախաքցայ Պուլկարեա եւ Ռու-
մանիա ըրած կարծ ճամբորդութիւննե-
րէս խորհրդածութեան դուռ մը բանալ
«Իրաւունք»ի ընթերցողներու համար
ուրկէ աւելորդ չէ հետաքրքիր աչ-
քով ներս նայի ։

Խորհրդածութիւններու այս համա-
ռօտ շարքը Ֆիլիպէյնս պիտի սկսիմ,
հարեւանցի ակնարկ մը նետելով մի-
այն ազգ. գործերու ընթացքին վրայ,
հարեւանցի կրսնմ որովհետեւ այդ քա-
ղաքը իր վրայ խօսեցնելու ընդար-
ձակ ներթեր կը հայթայթէ օրագը-
րողի մը համար, ինչ որ մենք առ այ-
ժմ բարենշան երեւոյթի մը աւետի-
սը ապով անցնինք պիտի Պուլկազ ։

Ֆիլիպէյնս այս անգամ իջնելու հոգե-
կան սա հաճոյքը տուաւ ինծի երբ ի-
մացայ թէ՝ հայ վաճառականներու մօտ
ծառայող հայ երիտասարդներ, պաշտօն-
եանեք, որոնք շատ քիչ անգամ կը
հետաքրքրուէին իրենց ազգային կեան-
քով, զարթնումի նշան ցոյց տալ
սկսած են ու կազմած են ընկերու-
թիւն մը շարժական 5 սանթիմի
գոհողութեամբ որմէ գոյացած հա-
սոյթը յատկացուցած են Որբանամ
գործին ։

Արդարեւ ծափահարելի կը զեռ-
նենք այս պատանիներու առած
քայլը, երբ ի նկատի առնենք թէ՝
5 սնթ. շարժականութիւնով սկսուած այս
ձեռնարկը լայն ծաւալ մը առած է
Ֆիլիպէյնս ազգայիններու մէջ, որոց
վերջերս, յեղափոխական անկումի
այս տեսլ. երեւոյթներուն առջեւ,
քաջները սկսած էին նեղ բացուիլ ։

Ֆիլիպէյնս հայուն յեղափոխական
գործի նկատմամբ այս դերը ար-
դարացի է թէ ոչ, անիկա այս յօդ-
ուածիս մէջ տեղ չունի առ այժմ,
միայն սա կէտը կուզեմ ստորագծել
հիմա թէ Որբանամ գործը արժա-
նի է ամէն տեղի, ամէն գաղափա-
րի, ամէն տարիքի, ամէն դասնան-
քի հայուն մտահոգութեան եւ քա-
ջաւերութեան առարկան ըլլալու,
հոն պէտք չէ մուտ գտնեն կուսակ-
ցական կամ անձնական յիմար ու
վնասակար պայքարներ. բայց առաի
Ֆիլիպէյնս Որբանամը առիթ եւ
ասպարէզ կը բանայ յեղափոխական
գաղափարի չիլ նայող ամէն Ֆիլի-
պէյնի չէզոքին գոտեպիւնդ համա-
խմբուիլ եւ ուժ տալ այդ օգտա-
կար ձեռնարկին, հակառակը ա-
ռիթ պիտի տայ ամէն իրջա-
խոն հայուն նախատինքն եւ պրժ-
գանքին ։

ՊՈԻՐԿԱԶ. — «Ազգ դայ եւ ազգ եր-
թայ, իսկ աշխարհ յաւիտեան կայ»
ասացուածը այնքան լաւ կը յար-
մարի Պուլկազի հայուն որ զինքը
ճանցողին համար երբէք տարակոյս
չը վերցներ. այո՛, այս քաղաքին
մէջ թաղական եւ հոգաբարձու կու-
գայ եւ կերթայ, բայց խնդիրները
յուրիտեան կան չեն վերջանար. Ֆի-
լիպէյն եւս օրս ես ինձի որոշե-
ցի՝ երբէք պղտիկ հարցում մը իսկ
չընել ազգ. գործերու մասին, բայց
հարցումը եկաւ զիս գտաւ Պուլկազ
ոտք դրած վայրկենիս ։ Վերջապէս
հասկցուեցաւ թէ նախորդ թաղա-
կանութեան ձեռքէն ոստիկանական
միջամտութեամբ առնուած է դիւանի
կնիքը եւ այլն, բայց վարչութեան
տետրակները ցարդ չեն յանձնուած
հետեւաբար նորանոր խնդիրներու
կսպասուի ։

Մենք խորհուրդ պիտի տայինք
անարժանաբար նախորդ թէ ներկայ
Պուլկազի թաղ. խորհրդին որ ազգա-

յին շրջանակի մէջ վերջացնեն այդ
խնդիրները առանց կառավարութեան
միջամտութեան եւ ոտնձգութեան
որոց հակահարուածը, ինչպէս փո-
ձերն ալ ցոյց տուած են, անըն-
պաստ ազգեցութիւնը տալ սկսած
է պուլկարահայ միւս գաղութնե-
րուն ալ ։

Բայց մինչ Պուլկազի քաղքենի
ժողովուրդը խնացուցիչ աղմուկնե-
րով թաղական եւ հոգաբարձու
կընտրուի, ու խոռով կուրով իրենց
շրջանները կը բոլորեն առանց բը-
նականաբար օգտակար ըլլալու ի-
րենց գործին մազի չափ ։ Անդին
կղզիացած հայ գեղացիներ իրենց
բառերով «խմպը» Միգոնի եւ Ամ-
պոնի իրենց աղքատիկ քսակին
միացնելով հարուստ քրտինքին, —
սուղ օրերու մէջ անձայն անշուկ
օգտակար կուզեն ըլլալ իրենց հա-
մայնքին ։

Վնց ամէն ի վեր «Ընթերցարան Ա-
րարատ» անուան տակ իրենց բացած
սրահը կուգայ մեզի այն համոզումին
բերել թէ՝ այս քաղաքին մէջ գա-
ւառացի հայեր յամառ յարատեւու-
թեամբ գործելու տրամադրութիւն
ցոյց կուտան եւ կուզեն օգտակար
ըլլալ ամեն ազգօգուտ ձեռնարկի,
եթէ սակայն Պուլկազի թաղակա-
նութեան եւ հոգաբարձութեան ա-
թոններուն արժանի գտնուող անձեր
վերջեն իրենց մէջէն կազ ու կուր
եւ երկրորդ կենցաղագէտ ըլլալով գիտ-
նան օգտակարապէս գործածել այդ
անտեսուած ուժերը ։

Եւ կը սպասենք ալ :

Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

Թ. Փաղարճըզ

« Հ Ա Մ Լ Է Թ » Ի

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ներուի ինծի եթէ ուղղակի չա-
բաթ իրիկուան ներկայացուցին քըն-
նադատութեան անցնելէ առաջ, ակամայ
չնդում մը կուզեմ ունենալ մեր տը-
խուր բարձրներուն մէկ քանի տգեղ
յատկանիչերը մատնացոյց ընելու
համար ։

Բարոյականի եւ կամ կենցաղա-
վարութեան քարոզ կարգալ չէ միտ-
քըս, բայց երբ ինքզինքնիս միշտ մի-
եւնոյն երեւոյթներուն մէջ կը գըտ-
նենք ամէն ժամանակ, եւ կը տես-
նենք որ մեր ժողովուրդը կը մնայ
նոյնը, ինչ որ ի տարինոր առաջ,
չի փոխուի, չի յառաջդիմեր գէպի
լաւ եւ ոտնակոխ կ'ընէ պատշաճու-
թեան տարրական կանոններն անգամ,
այն ատեն յաճախ յուսահատելու եւ
սրտնեղելու արդարացի պատճառներ
կուենանք ։ Թուրքիոյ մէջ նուազ
մեղադրելի պիտի ըլլայինք, բայց
հոս չըմեղանք ո եւ է բանաւոր պատ-
ճառ չենք կրնար ցցնել մեր բար-
քերուն ինկածութեան, քանի որ զար-
գանալու եւ կրթուելու միջոցներ
չեն պակսիլ ։

Արդարեւ մեզ չընապատող ժողո-
վուրդն ալ չափով մը պահանջո-
ւած դաստիարակութիւնէն զուրկ է,
բայց ատիկա պատճառ մըն է անոր
համար որպէսզի քայլ մըն ալ առնէ
գէպի յառաջդիմութիւն ։ Անոնք որ
չատ մը տեսակէտներով երէկ մեզմէ
չատ վար մակարդակի մը վրայ կը
կանգնէին, այսօր գերազանցած են
արդէն մեզ եւ վաղը այնչափ մեծ պի-

տի ըլլայ մեր եւ անոնց զարգացու-
մին մէջ գտնուած շոշափելի խրա-
մատը որ, հեգնութեան առարկայ պի-
տի ըլլանք անոնց ։ Ազգային արժա-
նապատեւութեան զգացումը, եւ օ-
տարները կենցաղավարութեան եւ
քաղաքակրթութեան մէջ գերազանցե-
լու ազնիւ նախաձեռն, մեզ յառաջ մը-
ղոզ խթաններ ըլլալու են ։

Կուգայ ժամանակ երբ մենք ալ կը
տեսնենք եւ կը զգուցնենք մեր հա-
սարակաց բարձրներուն արհամարելի տը-
գեղութիւնէն, բայց արդէն գոյու-
թիւն ունեցող չարիքը ծառացած ըլ-
լալով, խիստ դժուար կ'ըլլայ արմա-
տախիլ ընել զայն բացարձակապէս ։
Ի՞նչ փոյթ, եթէ ազատ երկրի եւ
յառաջ վարող հոսանքներու մէջ կը
գտնուինք, մենք կը պահենք տա-
կալին այն ամէնը, ինչ որ տուած
է մեզի դարաւոր ստրկութիւնը ։
Զարմանալիօրէն չտես ժողովուրդ մըն
ենք, կը շլանանք ամէն բանէ,
կ'ընդօրինակենք արտաքին փայլուն
չեղուած ինքները, ներքինը անփո-
փոխ կը մնայ, եւ ասոր համար ալ
ամէն պարագայի — մասնաւորապէս ըն-
կերական հաւաքոյթներու մէջ — ան-
մտօրէն կը մասնենք մեր նկարա-
գրին խեղճ իսկութիւնը ։ Որքան
ալ որ վիրաւորիչ, որքան ալ որ
խարստող ըլլան այս ակնայայտի
ճշմարտութիւնները, պէտք է որչափ
կարելի է չուտ սորվինք գնահատել
անոնց սորվեցուցած դասերուն ար-
ժէքը եւ զենքը զմեզ գիտակից
ճամբու մը մէջ ։ Ասիկայ ազգե-
ցիկ միջոց մը պիտի ըլլայ ստրկա-
գործելու համար մեզ եւ մեր զա-
ւակները բոլոր՝ համայնք մը, ժո-
ղովուրդ մը վարկաբեկող բարձրու-
քնադատելի խեղճ ու կրակութիւն-
ներէն ։ Գիտնալ խոստովանել օրո-
ւը, անհատի մը մէջ կ'ենթադրէ վե-
րանորոգուելու եւ ազնուանալու գո-
րաւոր ձգտում մը ։ Մինչեւ հիմա
չենք ազնուացեր, չենք կրթուել,
չենք զարգացեր, սարուկ մնացեր ենք,
բառին ընդարձակ առումով, որովհե-
տեւ գիտակցօրէն չենք զգացեր թէ
սխալներ եւ թերութիւններ ունինք ։

Մեր հանրային կեանքի անբուժե-
լի եւ շարաւարտ վերջերուն իրա-
կան պատճառները բուն իսկ մեր
յաւակնոտ ինքնախաբուսութեան մէջ
պէտք է փնտռենք, Պէտք է գիտ-
նալ մասնաւոր թէ՛ ազատ միջնո-
ւորի եւ ազատ միջավայրի մէջ ապ-
րելով ազատ եղած չենք ըլլար ։
Երբէ՛ք, հարկ է եւ անհրաժեշտ որ
մեր ներքին մարդը նախ ստրկա-
գործուի, որպէսզի ճշմարտապէս ա-
զատ ժողովուրդ մը ըլլանք, ընդու-
նակ յառաջդիմելու — եւ վերանորոգուե-
լու ։

Շարաթ գիշեր թատրոնի մէջ, ուր
հաւաքուած էինք ծափելու դերասա-
նի վը խոստմնալից փորձերը, անխտիր
ցուցադրեցինք մեր անկիրթ ու սու-
րուկ նկարագրին շատ մը առանձնա-
յատկութիւնները ։ Ուրախ եմ որ օ-
տարներ չկային, որովհետեւ ամօ-
թահար եւ նկուն պիտի երեւնայինք
անոնց առջեւ ։

Աստուած իմ, ան ի՞նչ կարգապա-
հութիւն էր — անիմաստ ծափեր, տնդ-
հատ աղմուկներ, իրար լռեցնելու,
սաստելու համար «սուսեր» խմբ-
վին ոտքի կանգնելներ, շարժում, եր-
բեմն պոսալ, վարագոյրներու բացուե-
լէն առաջ եւ յետոյ ծխել, լուծթիւն
պահանջուած պահերուն չոր պտուղ-
ներու բոժոյցները կոտորելներ, կուտ
ուտել, մասնաւոր ծամելու ձայնե-
րը . . . ։ Անցնի՛նք, չըսելու համար

